ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ 1956 ԹՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ.— Հունվարի 23—24-ին, Երևանում, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նիստերի դահլիճում, կայացավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի չորրորդ գումարման երկրորդ սեսիան, որը քննարկեց Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 1956 թվականի Պետական բյուջեն։

Հայկական ՍՍՌ 1956 թվականի Պետական բյուջեի մասին զեկուցումով հանդես եկան Հայկական ՍՍՌ Ֆինանսների միհիստր դեպուտատ Լ. Ա. Ստեփանյանը և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Բյուջետային հանձնաժողովի նախագահ դեպուտատ Դ. Տ. Զոլոխյանը։

Հայկական ՍՍՌ 1956 թվականի Պետական բյուջեն նախատեսվում է եկամուտների գծով՝ 1.335.699.000 ռուբլի, ծախսերի գծով՝ 1.335.060.000 ռուբլի, ծախսերի նկատմամբ եկամուտների 639.000 ռուբլի գերազանցումով։ 1955 թվականի համեմատությամբ, այս տարվա բյուջեի աճը կազմում է 126.700.000 ռուբլի կամ 10,6 տոկոս։

Ընթացիկ տարվա բյուջեից ժողովրդական տնտեսության ֆինանսավորմանը հատկացվում է 625.869.000 ռուբլի, այդ թվում՝ 340.054.000 ռուբլին Պետական բյուջեի միջոցներից։ Սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար նախատեսվում է 883.523.000 ռուբլի կամ բյուջեի ծախսերի ավելի քան 66 տոկոսը։ Այսպիսով, ժողովրդական տնտեսության և սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորմանը հատկացվում է ավելի քան 1.223.000.000 ռուբլի, որը կազմում է բյուջեի բոլոր ծախսերի 91,6 տոկոսը։

Կապիտալ շինարարությանը հատկացվող գումարները կազմում են ավելի քան 259.000.000 ռուբլի։ Այդ միջոցների հաշվին կկառուցվեն և շահագործման կհանձնվեն մի շարք նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, դպրոցներ, հիվանդանոցներ, հասարակական կենցաղային սպասարկության ձեռնարկություններ, բնակելի շենքեր։

Ռեսպուբլիկայի Պետական բյուջեի ծախսային մասում խոշոր միջոցներ են նախատեսվում լուսավորության և կուլտուրայի համար։ Այդ նպատակին հատկացվում է ավելի քան 565.000.000 ռուբլի, այսինքն՝ 27.700.000 ռուբլով ավելի քան անցյալ տարվա հատկացումներից։

Ընթացիկ տարում առողջապահության և ֆիզկուլտուրայի վրա ծախսվելու է ավելի քան 233.600.000 ռուբլի, սոցիալական ապահովության վրա՝ 84.500.000 ռուբլի։ Նախատեսվում է քաղաքների և շրջանային կենտրոնների բարեկարգման համար ծախսել ավելի քան 127.000.000 ռուբլի։

Գյուղատնտեսության և ջրային տնտեսության այս տարվա հատկացումները, միութենական բյուջեից ստացվող գումարներից բացի, կկազմեն ավելի քան 99.000.000 ռուբլի։

Բյուջեի մասին օրենքն ընդունելուց հետո սեսիան անցավ օրակարգի մյուս հարցերի քննարկմանը և ընդունվեցին համապատասխան որոշումներ։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի չորրորդ գումարման երկրորդ սեսիան իր աշխատանքներն ավարտեց մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության և արդյունաբերության հետագա զարգացման վառ հեռապատկերներով։

ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՍԻԱ.— Լրացավ Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության Հիգիենայի և էպիդեմիոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտի հիմնադրման 25 տարին։

Ինստիտուտն իր գոյության ընթացքում զգալի աշխատանք է կատարել ռեսպուբլիկայի բնակչության առողջապահության գործի բարելավման, կոմունալ սպասարկման, արդյունաբերական կետերի առողջապահական պայմանների և մի շարք հիվանդությունների էպիդեմիոլոգիայի ուսումնասիրության ուղղությամբ։

Ինստիտուտի հիմնադրման 25-ամյակի առթիվ տեղի ունեցավ հոբելյանական սեսիա, որտեղ լավագույն զեկուցումներ գիտա-հետազոտական աշխատանքների, սննդի առողջապահության գծով ռեսպուբլիկայում կատարվող աշխատանքների, լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկություններում աշխատանքի պայմանների բարելավման, Սովետական Հայաստանում առողջապահության զարգացման և այլ թեմաների ու բժշկական գործնական հարցերի շուրջ։

ԵՐԵՎԱՆԻ ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ.— Գեղարվեստական և դոկումենտալ կինոնկարների Երևանի ստուդիան թողարկեց «Ոսկե ցլիկ» կինոկոմեդիան, որի թեման վերցված է կոլտնտեսային կյանքից։ Կինոնկարը երիտասարդ ռեժիսյոր Մ. Հակոբյանի դիպլոմային աշխատանքն է։

Ստուդիան զգալիորեն ընդլայնել է աշխատանքների ծավալը։ Վերջերս արտադրության հանձնվեցին «Սովետական Հայաստան» (սցենարը՝ Ստալինյան մրցանակի լաուրեատ Դ. Էմինի) և «Սիրտս երգում է» (սցենարը՝ Մ. Երզնկյանի և Դ. Մելիք-ավագյանի) նոր կինոնկարները։

Կինոստուդիայի կոլեկտիվը ներկայումս աշխատում է լիամետրաժ գեղարվեստական նոր կինոնկարների ստեղծման վրա։

ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ.— Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության և Հայկական ՍՍՌ ժողովրդական ստեղծագործության տան նախաձեռնությամբ Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ խմբերգային ինքնագործունեության զարգացման հարցերին նվիրված խորհրդակցություն, որի աշխատանքներին մասնակցեցին կոմպոզիտորներ, երաժշտագետներ, երգեցիկ խմբերի ղեկավարներ, երաժշտության դասատուներ, կուլտուրայի բաժինների վարիչներ։

Խորհրդակցությունում քննարկվեցին խմբերգային ինքնագործունեության հարցերը։ Ապա տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որի ընթացքում նշվեց Հայաստանի ինքնագործ երգեցիկ խմբերի զգալի աճը և առաջարկվեցին միջոցներ՝ խմբերգային ինքնագործունեությունը է՛լ ավելի բարձրացնելու համար։

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ.— Ռեսպուբլիկայում բարձր հիմքերի վրա է դրված երաժշտական ուսուցումը։ Երևանից, Լենինականից և Կիրովականից բացի, երաժշտական ուսումնարաններ և դպրոցներ գոյություն ունեն նաև ռեսպուբլիկայի փոքր քաղաքներում և շրջաններում։

Երաժշտական բարեկարգ դպրոց գոյություն ունի նաև Ստեփանավանում, որի հիմնադրման 10-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն տեղի ունեցավ վերջերս։ Դպրոցի 10-ամյա գործունեության մասին զեկուցեց դպրոցի դիրեկտոր Վ. Կզարթմյանը։ Այնուհետև ելույթներ ունեցան Կիրովականի երաժշտական դպրոցի և ուսումնարանի դիրեկտոր, արվեստի վաստակավոր գործիչ Էդ. Կզարթմյանը, Նոր Բայազետի երաժշտական դպրոցի դիրեկտոր Ն. Բեժանյանը և Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի ուսուցչուհի Զ. Փանյանը։ Ապա ընթերցվեցին Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Արվեստի վարչությունից, Կուլտուրայի աշխատողների արհեստակցական միության ռեսպուբլիկական կոմիտեից, Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միությունից, Երևանի երաժշտական մի շարք ուսումնական հաստատությունների կոլեկտիվներից ստացված ողջույնի հեռագրերը։ Դպրոցի 10-ամյակի առթիվ շնորհավորական հեռագրեր էին ուղարկել նաև Մոսկվայի՝ Չայկովսկու անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Ա. Խաչատրյանը, Թբիլիսիի Պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ս. Բարխուդարյանը և ուրիշներ։ Վերջում դպրոցի աշակերտների ուժերով տրվեց համերգ։

ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ ԵՎ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԿԱՐԻՉ ԵՂԻՇԵ ԹԱԴԵՈՍՅԱՆԻՆ.— Լրացավ ականավոր նկարիչ Ե. Թադեոսյանի մահվան 20 տարին։ Այս առթիվ հունվարի 26-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության բաժանմունքը Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դահլիճում կազմակերպեց նկարչի ստեղծագործություններին նվիրված երեկո։

Ե. Թադեոսյանի ստեղծագործությունների մասին զեկուցեց արվեստագիտության թեկնածու Ռ. Դրամբյանը։ Անվանի նկարչի մասին իրենց հիշողությունները պատմեցին գրականագետ Ա. Կարինյանը և ճարտարապետ Մ. Մաղմանյանը։

Անվանի նկարչի մահվան 20-ամյակի կապակցությամբ հունվարի 26-ին Հայկական ՍՍՌ Պետական պատկերասրահում բացվեց նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը։

Ցուցադրված է Ե. Թադեոսյանի ստեղծագործական ժառանգությունից 150 նկար, որոնք դիտվում են մեծ հետաքրքրությամբ։ Այդ գործերից ուշագրավ են «Ռ. Սուրենյանի դիմանկարը» (1891 թ.), «Կոմիտասը էջմիածնի լճափին» (1894 թ.), «Արարատ լեռը» (1917 թ.), «Արարատ լեռը» և մի շարք այլ յուղաներկ նկարներ։ Հետաքրքիր են նաև Հ. Թումանյանի, Ա. Շիրվանզադեի, Հ. Հակոբյանի դիմանկարները։

Ցուցադրված են 1891—1934 թվականների ճանապարհորդությունների ընթացքում կատարված էսքիզներից բազմաթիվ նմուշներ և նկարչի վերջին անավարտ գործը՝ «Կոմիտաս» մեծադիր նկարը (1935 թ.)։

ԱՐՏԱՇԱՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Տարեցտարի բարեկարգվում և գեղեցիկ տեսք է ստանում Արտաշատը։ Վերջին երկու տարում այստեղ կառուցվել են բնակելի և վարչական շենքեր, բացվել են նոր փողոցներ։ Կառուցվել և շահագործման են հանձնվել կենցաղային սպասարկման պավիլիոնի, ոսկեղենի-ակնեղենի խանութի, շրջանային սպառողական կոոպերատիվ միության պահեստների, մոտորա-տրակտորային կայանի արհեստանոցի և այլ շենքեր։

Լայն ծավալ է ստացել նաև անհատական բնակարանային շինարարությունը։ Բազմաթիվ կոլտնտեսականներ ու ծառայողներ պետության օգնությամբ կառուցել են մեկ և երկու հարկանի տներ։ Միայն անցյալ տարի ամենամյա կառուցվել է 47, իսկ ներկայումս կառուցվում է 40 նոր տուն։

ՆՈՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԴՅՈՒՂՈՒՄ.— Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում վերջերս օգտագործման հանձնվեց շրջանային նոր հիվանդանոցի շենքը՝ վիրաբուժական, ռենտգենյան կաբինետներով և այլ հարմարություններով։

Հիվանդանոցը կսպասարկի նաև էջմիածնի, Հոկտեմբերյանի և Թալինի շրջանների մերձակա գյուղերի բնակիչներին։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՁԵՐ. ԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՍՏՈՑԱՇԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ.— Հունվարի 21-ին, Երևանի Դիերստանգր Ստենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում տեղի ունեցավ Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։

Նախագահության սեղանի շուրջը տեղ է գրավում պետական և հասարակական աշխի ընկնող գործիչներ, ձեռնարկության ինժեներա-տեխնիկական աշխատողներ, Մոսկվայից, Թբիլիսիից, ռեսպուբլիկայի բազաներից եկած հյուրեր, գործարանների դիրեկտորներ և ուրիշներ։

Հանդիսավոր երեկոն բաց է անում գործարանի հնագույն աշխատող վարպետ Հ. Դիլանյանը։ Գործարանի հիմնադրման 50-ամյակի մասին զեկուցում է ձեռնարկության դիրեկտոր Ա. Վիրաբյանը։ Հոբելյար կոլեկտիվին ջերմորեն ողջունում են զանազան հիմնարկությունների և ձեռնարկությունների ներկայացուցիչներ։

Ապա հրապարակվում են Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը և այլ որոշումներ՝ գործարանի լավագույն աշխատողներին պատվոգրերով պարգևատրելու մասին։

Հոբելյար կոլեկտիվին մատուցվում են արժեքավոր նվերներ։

Կարդացվում են ձեռնարկության 50-ամյակի առթիվ ստացված ողջույնի բազմաթիվ հեռագրեր։

Վերջում տեղի է ունենում ճոխ համերգ։

ՆՈՐ ԱԿՈՒՄԲՆԵՐ.— Հոկտեմբերյանի շրջանի Գեղաշեն գյուղում շահագործման հանձնվեց ակումբի նոր շենքը։ Ակումբը, որը կառուցված է տեղական կարմիր աուֆից, ունի դահլիճ՝ 500 հանդիսականի համար, նախասրահ, ինքնագործունեության, ժամանցի սենյակներ։

Վերջին երեք—չորս տարում շրջանում կառուցվել է 15 ակումբի շենք։

Վերջերս շահագործման հանձնվեց նաև Զանգանի Լեռնածոր գյուղի ակումբի երկհարկանի շենքը։ Ակումբն ունի 300 տեղանոց դահլիճ, գրադարան, ընթերցարան, ժամանցի, ինքնագործ խմբերի պարապմունքների սենյակներ։

Ակումբի նոր շենք շահագործման հանձնվեց նաև նույն շրջանի Փիրլու գյուղում։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՆԵՐԸ.— Տարեցտարի դարձկարգվում ու գեղեցիկ տեսք է ստանում Հոկտեմբերյանի շրջանային կենտրոնը։ Կայարանամերձ ասֆալտապատ փողոցի երկայնքով վեր են խոյացել երկհարկանի գեղեցիկ շենքերը։ Այստեղ անցած մեկ տարում շահագործման հանձնվեցին մեկ դպրոցի, երկու վարչական, մեկ բնակելի շենք և երկու խանութ։ Քաղաքում կառուցվել է 320 անհատական տուն։

Առաջիկա ամիսներին շահագործման կհանձնվեն ևս մի քանի շենքեր։

ՄԵՆԴԱՐԻՑՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Երևանի Սասյանության շրջանում սկսվել է բիսկվիտի ֆաբրիկայի շենքի շինարարությունը։ Ֆաբրիկան կտա չորս հազար տոննա բիսկվիտեղեն։ Սկսվել է հացի նոր խոշոր գործարանի կառուցումը բազաբի Միկոյանի շրջանում։ Այստեղ, հացից բացի, կթխվի նաև հրուշակեղեն։

Ընդլայնվում է Հայաստանի պարենային ապրանքների արդյունաբերությունը։ Կառուցվում են նոր ձեռնարկություններ, վերակառուցվում են հները։ Երևանում ավարտվում են հրուշակեղենի նոր ֆաբրիկայի կառուցման աշխատանքները։

Երևանի ձեթ-օճառի կոմբինատում կառուցվում է յուղի զտման խոշոր բաժանմունք, որի շահագործումով ձեթի օրական արտադրանքը կհասնի 10 տոննայի։

Մենդի շատ ձեռնարկություններում տեղադրվող նոր սարքավորումները հնարավորություն կտան ավելացնելու կարամելի, ձեթի, մակարոնեղենի և այլ մթերքների արտադրությունը։

ԱՐԹԵՔԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՐՈՐՏՈԼՈԳԻԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.— Հայաստանը օժտված է կլիմայական բարենպաստ պայմաններով, գեղեցիկ բնությամբ և բուժիչ հանքային շրերով։ Այս բոլորը հնարավորություն են ստեղծում զարկ տալու առողջարանների, հանգստյան տների և կուրորտների զարգացմանը։

Ռեսպուբլիկայի բնական այս հարստությունները նպատակահարմար և առավել արդյունավետ կերպով օգտագործելու համար ձեռք են առնվում անհրաժեշտ միջոցներ։

Երևանի Կուրորտոլոգիայի և ֆիզիկական մեթոդներով բուժման ինստիտուտի լաբորատորիաներում, սեկտորներում, կլինիկական բաժանմունքներում ուսումնասիրվում են հանքային շրերը, մշակվում են բուժական նոր մեթոդներ, կազմվում առողջարաններում տարբեր հիվանդությունների բուժման կոմպլեքսային սխեմաներ։ Ինստիտուտի փորձարկման լաբորատորիան շատ հետաքրքիր հետազոտություններ է կատարել հանքային շրերի պարունակած քիմիական նյութերի մարդկային օրգանիզմի վրա թողած ազդեցությունների մասին։ Միկրոէլեմենտների ուսումնասիրության գործում ինստիտուտում կատարվող հետազոտությունները նոր հեռանկարներ են բաց անում հանքային շրերը բուժիչ նպատակներով օգտագործելու ասպարեզում։ Լայն հնարավորություններ են ստեղծվում հանքային շրերը կիրառելու սիրտ-անոթային, ստամոքս-աղիքային, նյարդային և մյուս սիստեմների հիվանդագին երևույթների բուժման գործում։

Միկրոէլեմենտների կիրառումն առանձնապես մեծ նշանակություն ունի Ջերմուկի, Արզնիի և ռեսպուբլիկայի մյուս առողջարանների համար, քանի որ այդ էլեմենտներն առանձնապես առատ են պարունակվում ժայթքող հանքային շրերում։

Ինստիտուտն այժմ մշակում է մեթոդներ հանքային շրերի միջոցով միկրոէլեմենտների այդ բարերար ազդեցությունը բուժիչ նպատակներով օգտագործելու համար։

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ.— Հայաստանը աչքի է ընկնում իր հանքային ջրերի մեծ պաշարներով, որոնց մի մասը երկրի մակերես է դուրս գալիս բարձր ջերմությամբ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական ինստիտուտի ջրաերկրաբանական բաժանմունքը այժմ աշխատանքներ է կատարում ստորերկրյա ջերմության ուսումնասիրման և այն ժողովրդատնտեսական նպատակներով օգտագործելու ուղղությամբ։

Բաժանմունքի գիտական աշխատողները Երևանի Պետական Համալսարանի երկրաբանական ամբիոնի դասախոսների հետ միասին ավարտել են Ջերմուկում և նրա մերձակայքում եղած հանքային ջրերի առաջացման ուսումնասիրությունը։ Գիտական աշխատողները կատարել են տեղանքի երկրաբանական կառուցվածքի հանույթ, նշել հորատման այն կետերը, որտեղից կարելի է ստանալ բարձր ջերմաստիճանի ջուր։

Այժմ հիսուն մետր խորությունից հանված հանքային ջուրն ունի մինչև 64 աստիճան ջերմություն։ Հետազոտությունները ցույց են տվել, որ ավելի խոր ընկած շերտերում ջրի ջերմաստիճանը զգալիորեն բարձր է և հասնում է հարյուր ու ավելի աստիճանի։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արտադրողական ուժերի ուսումնասիրման խորհրդի բյուրոյի հաղորդման համաձայն, ստորերկրյա ջերմության օգտագործումը կարևոր նշանակություն ունի ռեսպուբլիկայի էներգետիկայի համար։ Այդ հիմքի վրա առաջիկայում կկազմակերպվի Ջերմուկ առողջարանի ջերմամատակարարումը, կկառուցվի ջերմաէլեկտրակայան, որը էներգիա կտա մոտակա բնակավայրերին, ինչպես նաև ապակետարայի գործարանին, որը կառուցվելու է ընթացիկ հնգամյակում։ Ընդերքի ջերմությունը հետագայում կօգտագործվի նաև անասնապահական ագարակների ու ջերմոցների տաքացման համար։

Այս տարի երկրաբանական ինստիտուտի ջրաերկրաբանական բաժանմունքի գիտական աշխատողները կշարունակեն Հանրավանի և ռեսպուբլիկայի այլ վայրերում եղած ստորերկրյա տաք ջրերի ուսումնասիրությունը։